ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2019-Ա « 17 » ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 2-Ի
Հ.3898-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 25.03.2026թ. եզրակացությունը, հաշվի առնելով քաղաքացի Մարիցա Մարտիկյանի դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2013 թվականի օգոստոսի 2-ի «Երևանի Նոր Արեշի 31-րդ փողոցի հ.9 հասցեի բնակելի տանը կից հողամասի և շենք-շինությունների նկատմամբ Եղիսապետ Մկրտիչի Մարտիկյանի, Մարիցա Հարությունի Մարտիկյանի, Ռոզա Հարությունի Մարտիկյանի իրավունքները վերականգնելու, 73.68քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.3898-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրից հանել «,73.68քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» բառերը.

2) Որոշման նախաբանում՝ «686.38» թիվը փոխարինել 595.7» թվով.

3) Որոշման 1-ին կետում՝ «300քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 300քմ մակերեսով հողամասի և 373.68քմ մակերեսով հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ» բառերը փոխարինել «283.0քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 283.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ» բառերով.

4) ուժը կորցրած ճանաչել Որոշման 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերը:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ